| 5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Կոտայք, Հերթան-Գնայների վտար 1:<br>ՍՕՍ Մամուլական Գյուղ «Կոտայք» մասնաճյուղը գտնվում է Կոտայքի մարզի Կոտայք գյուղի կողմից անհատույց օգտագործման համար հանձնված շուրջ 6 հեկտար ընդհանուր հողատարածքի վրա: Լյճ բաղկացած է 13 ընտանեկան տներից, վարչա-տնտեսական և ուսումնական շինություններից: Այս բոլոր շենքերն ու շինությունները, ինչպես նաև դրանցում օգտագործվող գույքը կազմակերպության սեփականություն են և հիմնականում մեզ են ընդել: «ՍՕՍ-Կիներթուրի Ինտերնացիոնալ» կազմակերպությունը (Հերթան-Գնայների վտար 51 A-6020 Ինտերնու, Ալևաթիա) իրականացնում է ծրագրի իրականացումը:   |



|    |                                 |   |
|----|---------------------------------|---|
| 6. | Ծրագրի բյուջեն                  | <p>Ծրագրին առնչվում է սոցիալական բնագավառը:</p> <p>2013- 2015 թվականների կտրվածքով ծրագրի տարեկան բյուջեն կկազմի մոտ 296 060 325 ՀՀ դրամ և ըստ նուստայաների ծախսերը կկազմեն՝</p> <p>I եռամսյակում 64 528 836 ՀՀ դրամ<br/>         II եռամսյակում 63 122 036 ՀՀ դրամ<br/>         III եռամսյակում 77 717 615 ՀՀ դրամ<br/>         IV եռամսյակում 90 691 837 ՀՀ դրամ</p> <p>2013-2015 թթ. ընդամուր բյուջեն կազմում է մոտավորապես 888 180 975 ՀՀ դրամ:</p> <p>Ծրագրի ֆինանսական աղբյուր է համընդամենը «ՍՕՍ-Կիներտորթի Ինտերնացիոնալ» կազմակերպությունը (Հերման-Գմբներ փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա)</p>  |
| 7. | Բարեգործություն ստացող          | <p>Ծրագրի շահառուներ են հանդիսանում ճեղքված մինչև 15 տարեկան ընդամուր թվով 91 երեխաներ, որոնք ՍՕՍ Մանկակա Գյուղ են ընդունվում տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան հասնաճարակների որոշումների և աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության ուղեգրի կիսման վրա:</p> <p>Սամերի ընդունելությունը իրականացվում է տեղական համայնքների խնամակալության և հոգաբարձության համեմատորակների համապատասխան որոշման, աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության ուղեգրի կիսման վրա և ինժեներական ընդգրկվում են կամ երկբովանի, կամ միակողմանի ծնողական խնամքից զրկված երեխաներ ինչպես նաև «սոցիալապես ուղբացած» և լքված երեխաները:</p> <p>Ծրագիրը իրականացվելու է 2013-2015 թվականների ընթացքում (և կրում է շարունակական բնույթ):</p>   |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | <p>1. Ընդամուր թվով 91 երեխաների շարունակական խնամքի և դաստիարակության անդամն են իրականացում ՍՕՍ-ընտանիքի շրջանակներում (ընտանեկան բյուջե)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 64 658 586 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են անտեկան կտրվածքով:</p> <p>2. Շուրջտարյա կրթա-դաստիարակչական ծրագրերի, մարզա-մշակութային միջոցառումների և ամառային հանգստի կազմակերպում յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 31 650 163 ՀՀ դրամ: Կրթա-դաստիարակչական ծրագրերի, մարզա-մշակութային միջոցառումների ծախսերը կատարվում են անտեկան կտրվածքով, իսկ ամառային հանգստի կազմակերպվում է եռլիս, օգոստոս ամիսներին:</p> <p>3. Շուրջտարյա առաջնային արտոլորության պահպանում, բուժօգնականության ավանդում և հոգեբանական աջակցություն երեխաներին՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ՝ 5 276 000 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են անտեկան կտրվածքով:</p> <p>4. Կոմունալ ծառայություններ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 12 625 600 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են անտեկան կտրվածքով:</p> <p>5. Գույքի ձեռքբերում, փոխարինում, վերանորոգում և պահպանում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 14 712 000 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում է ըստ անընտանջուտության:</p> |

20.14/6.17

Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը

|     |   |  |
|-----|---|--|
| 3   |   | <p>6. Ծրագրի մասնագիտական անձնակազմի (շահառուների հետ անմիջականորեն աշխատող անձնակազմի) աշխատակիցներ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 107 982 863,5 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են անտեկան կտրվածքով:</p> <p>7. Սամերի համար 25 տեղանոց ակտորային ձեռքբերում՝ 18 894 800 ՀՀ դրամ:</p> <p>8. Կազմակերպական ծախսերը կազմում են մոտ 40 260 312 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են անտեկան կտրվածքով:</p>  |
| 10. | <p>Ձեռք բերվող (ներմուծվող) սպորանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և մակսատնավոր գինը</p> | <p>Երեխաների խնամքն ու դաստիարակությունը իրականացնելու համար կազմակերպությունը տրամադրում է անտեկան ընտանեկան բյուջե, որը ներառում է մրանց սննդի, հիգիենայի պարագամների, լվացող նյութերի, հագուստի, դպրոցական և գրասենյակային, ինչպես նաև մանր փոխանակումների գումարներ: Մանր փոխանակումները, որպես առանձին ծախսերի հոլոված, ներառում է տարբեր տեսակի կենցաղային պիտույքների և պարագամների փոխարինում (ափսեներ, բաժակներ, էլեկտրական լանդեր, պարկ, արդույկ սնունդ, սրբիչներ, ինչպես նաև կենցաղային ալյուրային պարագամներ) և պարագամների փոխարինում (ափսեներ, բաժակներ, էլեկտրական լանդեր, դրանց մաշվածություն, շարժիչ դուրս գալու և այլն պիտույքի չլինելու դեպքում):</p> <p>Ցուրքանչյուր մոթ երեխա ընդունվելու կազմակերպությունը միանվագ հատկացնում է գումար (տեխ. «մոթ երեխայի մուտքի գումար»)՝ մրանց համար հազար և ասֆին անհրաժեշտությունը այլ պարագամներ ձեռք բերելու համար:</p> <p>1. Ընդամուր թվով 91 երեխաների խնամքի և դաստիարակության իրականացում ՍՕՍ-կազմում է մոտ 64 658 586 ՀՀ դրամ, այդ թվում՝</p> <p>1.1. սնունդ՝ 29 473 500 ՀՀ դրամ<br/>         1.2. լվացող նյութեր և հիգիենայի պարագամներ՝ 3 006 450 ՀՀ դրամ<br/>         1.3. հագուստ և կոշիկ՝ 12 087 360 ՀՀ դրամ<br/>         1.4. դպրոցական ծախսեր՝ 5 252 940 ՀՀ դրամ<br/>         1.5. գրագույն գումար՝ 2 335 410 ՀՀ դրամ<br/>         1.6. այլ ընտանեկան ծախսեր՝ 10 540 170 ՀՀ դրամ<br/>         1.7. առանց ծախսերը հիմնավորող փաստաթղթի ձեռքբերումների եկամտային հարկ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 962 756 ՀՀ դրամ,</p> <p>2. կրթա-դաստիարակչական ծրագրերի, մարզա-մշակութային միջոցառումների և ամառային հանգստի կազմակերպում յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 31 650 163 ՀՀ դրամ, այդ թվում՝</p> <p>2.1. Քիչ թիվ ձեռք կազմում նաև սոցիալական որոցած և լքված երեխաները, որոնք իրանց ծնողների անտարբերության, բռնության, անտանան կյան էլ ընտանեկան բաղր ու խնամված հանգամանքների բերումով է, որ հայտնվում են կացակալություն խնամքի ներքո: Որպեսզի կարողանանք պահպանել մրանց մուտքը, հոգևոր և ֆիզիկական ներթաշնակ զարգացումը, սամերի համար կազմակերպվում են նաև նաև արտոլորատարանային պարագամները և նախապատրույթների խնամքները:</p> <p>Նախապատրույթների խնամքների յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 962 756 ՀՀ դրամ, այդ թվում՝</p> |

20.14/6.17

երեխաների համար, ինչպիսի նաև հաստակ ընդունակություններ ունեցող երեխաների արտադասարանային պարսպանքների կազմակերպում (մասնագետների վերձավճար, անհրաժեշտ պարագաների և նյութերի ձեռքբերում)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 11 952 163 ՀՀ դրամ:

2.2. մարդա-օչակառուցման միջոցառումներ, մարզական խաղեր, օլիմպիադաներ, մրցաշարեր, համերգներ, բալետական և կրիտային ներկայացումներ, էքսկուրսիաներ, մամուլական դիտարկումներ, ազգային ավանդույթներ և միջազգային տոնական միջոցառումներ, յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 3 193 500 ՀՀ դրամ:

2.3. 91 երեխաների ամառային հանգստի կազմակերպում ճամբարային և առողջարանային համալիրներում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 16 504 500 ՀՀ դրամ:

Կազմակերպությունը չունի սեփական ճամբարային կամ առողջարանային համալիրներ և ամառային արձակուրդների շրջանում երեխաների հանգիստը առավել բուխանդակալից անցկացնելու և իրենց հասակակիցների հետ ինտեգրվելու մրցատակով կազմակերպությունը նրանց ճամբարային ծրագրեր կազմակերպում է գործող տրևե ճամբարային համալիրում և ըստ կերպի՝ աշխատանքների կատարում է բոլոր համապատասխան վճարումները: Առողջարան ինժեյներ ունեցող երեխաներին կազմակերպությունը տանում է համապատասխան առողջարանային համալիրներ և դարձյալ կատարում է բոլոր վճարումները:

3. առաջնային առողջության պահպանում, բուժակառարկված ապահովում և նուրբացում հոգեբանական աջակցություն երեխաներին՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 5 276 000 ՀՀ դրամ, այդ թվում՝

3.1. երեխաների առաջնային առողջության պահպանում, և բուժակառարկված ապահովում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 876 000 ՀՀ դրամ:

3.2. հոգեբանական աջակցություն երեխաներին՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 400 000 ՀՀ դրամ

4. կոմունալ ծառայություններ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 12 625 600 ՀՀ դրամ, այդ թվում՝

4.1. ջրամատակարարման վարձավճար՝ 300 000 ՀՀ դրամ:

4.2. էլեկտրաէներգիայի վարձավճար՝ 6 200 000 ՀՀ դրամ:

4.3. գազամատակարարման վարձավճար՝ 5 000 000 ՀՀ դրամ:

4.4. սարքավորումների վարձավճար՝ 589 200 ՀՀ դրամ:

4.5. տեղական հարկեր՝ 536 400 ՀՀ դրամ:

գույքի ձեռքբերում, փոխարինում, վերանորոգում և պահպանում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 14 712 000 ՀՀ դրամ, այդ թվում՝

5.1. Մամուլական գյուղի տարածքի և շինությունների (բնակավայրի) և ջրամատակարարման համակարգի) վերանորոգում, պահպանում՝ և արդիականացում, գործիքների և պարագաների ձեռք բերում՝ 8 020 000 ՀՀ դրամ:

20-14/6.17

5.2. կառույցի ձեռք բերում և վերանորոգում՝ 2 150 000 ՀՀ դրամ:

5.3. էլեկտրական արջակառուցումների՝ ստանդարտների, գազօչակաների, կառուցվածքների, կառուցվածքների, համակարգիչների, ծրագրերի ձեռք բերում և վերանորոգում՝ 4 542 000 ՀՀ դրամ:

6. ծրագրի մասնագիտական անձնակազմի (շահառուների հետ անմիջականորեն աշխատող անձնակազմի) աշխատավարձեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 107 982 863.5 ՀՀ դրամ, այդ թվում՝

6.1. ՍՕՍ-մայր դաստիարակներ՝ 61 650 583.5 ՀՀ դրամ:

6.2. ՍՕՍ-մայր դաստիարակների օգնականներ՝ 20 146 887.4 ՀՀ դրամ:

6.3. անձնակազմի կազմակերպիչներ՝ 3 888 727.4 ՀՀ դրամ:

6.4. դպրոցական ավտոբուսի վարորդ՝ 3 888 727.4 ՀՀ դրամ:

Մանրի դպրոցներ, գանձազան միջոցառումների, առողջապահական կազմակերպությունների, հանգստի վայրեր տեղափոխելու համար 25 տեղանոց ավտոբուսի ձեռքբերում՝ 18 894 800 ՀՀ դրամ:

8. կազմակերպական ծախսերը 2013-2015 թվականներից յուրաքանչյուր համար կազմում են մոտ 40 260 312 ՀՀ դրամ:

Կազմակերպական ծախսերը 2013-2015 թվականներից յուրաքանչյուր համար կազմում են մոտ 40 260 312 ՀՀ դրամ, որոնք համապատասխանաբար կազմում են 2013-2015 թվականների տարեկան բյուջեի 13.60 տոկոսը՝

Այդ թվում՝

1. հանրային կապեր և մերկայացուցչական ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 110 000 ՀՀ դրամ:

2. աշխատակազմի ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 29 216 262.04 ՀՀ դրամ, ընդ որում՝

2.1. աշխատակազմ (կազմակերպիչներ և սպասարկող անձնակազմ) և ՍՕՍ-մայր դաստիարակի կենսաթոշակ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 27 716 262.04 ՀՀ դրամ:

2.2. ՍՕՍ-մայր դաստիարակների և նրանց օգնականների մասնագիտական սովորելիքի յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 500 000 ՀՀ դրամ:

3. հեռահաղորդակցություն և գրասենյակային պարագաներ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 3 380 000 ՀՀ դրամ:

4. այլ ընթացիկ և չմախտեսական ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 608 300 ՀՀ դրամ, ընդ որում՝

4.1. սպանիակազմություն՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 126 000 ՀՀ դրամ:

4.2. քանկային, չմախտեսական վարչական և ընթացիկ ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 482 300 ՀՀ դրամ:


5. արձանագրության միջոցների (ՎԱԼՁ 212300-551 ՇԵ-ԿՐՈՒՆ-ՆԻ-ՎԱ, Tuason մարտար մեքենաներ, Mistsubishi մակնիշի միկրոավտոբուս, HYUNDAI մակնիշի ավտոբուս) նորոգում, սպասարկում, շահագործում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 6 177 750 ՀՀ դրամ:

Կազմում է մոտ 6 177 750 ՀՀ դրամ:

20-14/6.17

11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը

|   |   |
|---|---|
| <p>6. աշխատակիցների գործուղման ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 312 000 ՀՀ դրամ:</p> <p>7. վարձավարչության ծախսերի փոխհատուցում և տրամադրության միջոցների տրամադրության յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 400 000 ՀՀ դրամ:</p> <p>8. Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության և գիտության, առողջապահության նախարարությունների, ՀՀ առնչվածության, ինչպես նաև հասայի մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, նրբիականի պաշտպանության հարցերով գրառվող տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների լայն շրջանակների հետ:</p> <p>9. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը իրականացվում է նվիրատու կազմակերպությունների և դրանց կառույցների կողմից՝ պարբերական ատուզայից, ինչպես նաև, ֆինանսատնտեսական և ինքնաուժ-մակալարժեքային գործունեության ատուիտների իրականացման միջոցով:</p> <p>10. Սահմանված կարգով տեղակալություն կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:</p> | <p>12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</p> <p>13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</p> |
|---|---|



Մ. Բոչարյան

Ազգային տնօրեն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

Ձ 14/6.17

0010, Երևան, Մելիք-Արամյան փող. 1  
Հեռ. (+374 60) 700 255

11.11.15 № 03480-21  
Ձեռ № 34657-15

«Հ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 06.11.2015թ. N 15/15.1/18973-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-177-Ա որոշմամբ հաստատված ծրագրի փոփոխություններ կատարելու ու նույն ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ ընդհանուր առմամբ առարկություններ չունենք, սակայն հաշվի առնելով, որ ավտոբուսը ներմուծվում է արտերկրից և օգտագործվելու է ծրագրի անմիջական շահառուների սպասարկման համար, ուստի առաջարկում ենք նշված ծախսը հանել ծրագրի 11-րդ կետի 8-րդ ենթակետից և առանձին պարբերությամբ արտացոլել փոփոխված ծրագրի 9-րդ և 10-րդ կետերում՝ «Սաների համար 25 տեղանոց ավտոբուսի ներմուծում՝ 18,894,800 ՀՀ դրամ» ձևակերպմամբ, միաժամանակ այդ գումարի չափով պակասեցնելով հիշյալ կետերում նշված 59,155,112 ՀՀ դրամ արժեքով կազմակերպական ծախսերի ընդհանուր գումարը:

Հարգանքով

Ատոմ Զանջուղազյան/

Կատարող՝ Ս. Ավագյան  
Հեռ. 011 910-438

034/35373-15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

Մ-14/6.17

Երևան-010, Մելիք-Աղամյան 1.

06/3-3734640-15

11.11.15

«Հառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 06.11.2015թ. N 15/15.1/18973-15 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-177-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու ու նույն ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով

Վ. Միմոնյան

Կատարող՝ ԳՄՀՄ բաժին  
Հեռ. 011.800.329

06/3 5343-15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Մ-14/6.17

« 9 » 11 2015 թ.

N 9903-15

Ձեր 2015-11-06, 15/15.1/18973-15

9903-15

«ՀԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ  
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ  
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-177-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և նույն որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին» («ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Տ. ԲԵՐԻԿՅԱՆ

Կատարող՝ Միջազգային համագործակցության և  
գարգացման ծրագրերի վարչություն 581-680

040/35100-15

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեն (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30  
http://www.mlsa.am info@mlsa.am



20.14/6.17

ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի նախագահի  
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Ս. Տեր-Սիմոնյան,


Հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.11.2015թ. թիվ 07/80-2/34657-15 գրությամբ նշված առաջարկությունը Ձեզ ենք ներկայացնում «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոտայքի մարզ, Կոտայք գյուղում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» 2013-2015 թթ. ծրագրի լրանջակված տարբերակը:

Առդիր 6 թերթ:

Կանխավ շնորհակալություն:

Լավագույն ցանկություններով՝

Աշոտ Քոչարյան



Ազգային տնօրեն

«ՍՕՍ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԿԻՐՈՒԹՅՈՒՆ  
Մասնաճյուղ  
12/11/2015թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N ՍՍ-177-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և նույն որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բերի ներմուծման մասին («ՍՕՍ-մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ

|   |  |
|---|--|
| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը  | Հիմնավորում  |
| ՀՀ ֆինանսների նախարարություն - 11.11.15, N 07/80-2/34657-15   |  |
| <p>1. Ընդհանուր առմամբ առարկություններ չունենք, սակայն հաշվի առնելով, որ ավտոբուսը ներմուծվում է արտերկրից և օգտագործվելու է ծրագրի անմիջական շահառուների սպասարկման համար, ուստի առաջարկում ենք նշված ծախսը հաննել ծրագրի 11-րդ կետի 8-րդ ենթակետից և առանձին պարբերությամբ արտացոլել փոփոխված ծրագրի 9-րդ և 10-րդ կետերում՝ «Մաների համար 25 տոնոնոց ավտոբուսի ներմուծում՝ 18,894,800 ՀՀ դրամ» ձևակերպված, միաժամանակ այդ գումարի չափով պակասեցնելով հիշյալ կետերում նշված 59,155,112 ՀՀ դրամ արժեքով կազմակերպական ծախսերի ընդհանուր գումարը</p> | <p>1. Առաջարկությունը ընդունվել է: Կցված է ծրագրի լրանջակված տարբերակը</p> |

20.14/6.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

նոյեմբերի 2015 թվականի N Մ- -Ա  
քաղ. երևան

Մ-14/6.13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-  
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015  
ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N Մ-885-Ա ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՐԲ  
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ  
ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ԾՐՁԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ  
(«ՖՈՒԼԵՐ ՏՆԱՇԻՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱ-  
ՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության  
ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի -ի N 07/80-2/-15 և նոյեմբերի -ի  
N 6/3-3/-15 եզրակացությունները, որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի «Ֆուլեր տնաշինական  
կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող  
«Անհայտ կորածների ընտանիքների և այլ խոցելի խմբերի տների վերականգնում» N Մ-885-  
Ա որոշման և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետում «ԿՄԽԿ-ից մեքենայի գնում  
«Toyota LC Hardtop Diezel HZ76» բառերը փոխարինել «ԿՄԽԿ-ից մեքենայի գնում և  
ներմուծում՝ «Toyota LC Hardtop Diezel HZ76» բառերով.

2) որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Սահմանել, որ «Հայաստանի «Ֆուլեր տնաշինական կենտրոն» բարեգործական  
հասարակական կազմակերպության կողմից՝ «Կարմիր խաչի» միջազգային կոմիտեի  
հայաստանյան պատվիրակությունից ձեռքբերված Toyota Land Cruiser Hardtop Diesel HZ76L  
մակնիշի ավտոմեքենան (2009 թվականի արտադրության, թափքի համարը՝  
JTEEB71J907006558, 2,200 կգ ընդհանուր քաշով, 8,000 ԱՄՆ-ի դրլար արժողությամբ, ԱՄ  
ՄՁՄ ՄՏ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի  
շրջանակներում»:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-  
րություն և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի  
նախարարություն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

Մ-14/6.12

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1  
Հեռ. (+374 60) 700 255

12.11.15 № 04180-21

Ձեռ. № 34827-15

«Հ կառավարության բարեգործական  
ծրագրերի համակարգման հանձնաժողովի  
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 09.11.2015թ. N 15/15.1/19094-15 գրության՝ կապված ՀՀ

կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի  
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման  
հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի N Մ-885-Ա որոշման և որոշմամբ  
հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու ու նույն ծրագրի շրջանակներում  
բեռի ներմուծման մասին («Ֆուլեր տնաշինական կենտրոն» բարեգործական  
հասարակական կազմակերպություն)» որոշման նախագծի հետ, առաջարկում ենք որոշման  
նախագծի 2-րդ կետում ներառել նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի  
նախարարությանը:

Հարգանքով

Ատոմ Զանջուղայան/

Կատարող՝ Ա. Այվազյան  
Հեռ. 011 910-438

024/35481-15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

№ 14/6.18

Երևան-010, Մելիք-Աղամյան 1.

0613-3/34587-15  
11.11.15

«Հ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 09.11.2015թ. N 15/15.1/19094-15 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի N Մ-885-Ա որոշման և որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու ու նույն ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Ֆուլեր տնաշինական կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպություն)» որոշման նախագծի 2-րդ կետում առաջարկում եմ ներառել նաև «Հ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը»:

Հարգանքով

Վ. Միմոնյան

024/35325-15

Կատարող ԳՄՀԱ բաժին  
Հեռ. 011.800.329

Տ Ե Ղ Ա Կ Ա Լ Ք

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի N Մ-885-Ա որոշման և որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու ու նույն ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Ֆուլեր տնաշինական կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպություն)» որոշման նախագծի վերաբերյալ

|  |   |
|--|---|
| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը   | Հիմնավորում   |
| Առաջարկում ենք որոշման նախագծի 2-րդ կետում ներառել նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը | Առաջարկությունը ընդունվել է: Կցված է նախագծի լրամշակված տարբերակը |
| Առաջարկում ենք որոշման նախագծի 2-րդ կետում ներառել նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը | Առաջարկությունը ընդունվել է: Կցված է նախագծի լրամշակված տարբերակը |

04.14/6.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

— նոյեմբերի 2015 թվականի N Մ- քաղ. երևան

-Ա 20.14/7.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N Մ-215-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի -ի N 07/80-2/-15 և նոյեմբերի -ի N 06/-/15 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 23-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն - Գյումրի» ծրագրի մասին՝ N Մ-215-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի հունիսի 26-ի N Մ-680-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Պիկ Լիցեյում» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00804437) 2015 թվականի հոկտեմբերի 14-ին կնքված՝ N 09/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային սեղանների համար 3 հատ մետաղական տակդիրի ձեռքբերում՝ 570,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ինֆորմատիկ Սոլուշն» ՍՊԸ-ի հետ (00061961) 2015 թվականի հոկտեմբերի 22-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպիչի համար 8 հատ ժապավենի ձեռքբերում՝ 662,400 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



20.14/7.1

0010, Երևան, Մեյիք-Աղայան փող. 1  
Հեռ. (+374 60) 700 255

11.11.15թ. № 07/80-2/34704

Ձեռք №

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 06.11.2015թ. N 15/15.6/18979-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 23-ի N Մ-215-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանցուղայան/

11.11.15թ.  
№ 034/35445-15





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Աղամյան 1  
Հեռ. 011 800077

10.11.15թ. 21.14/7.1  
№ 06/3-3/34320-15

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի նախագահ  
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 06.11.2015թ. թիվ 15/15.6/18979-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 23-ի N Ա-215-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրոնյան

10.11.15թ.  
№ 034/35182-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

նոյեմբերի 2015 թվականի N Ա-  
թաղ. Երևան

-Ա  
21.14/7.2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-  
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱ-  
ԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Ա-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ  
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ  
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի -ի N 07/80-2/-15 և նոյեմբերի -ի N 06/-/-15 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Ա-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Առեա Պապիրուս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02584897) 2015 թվականի նոյեմբերի 2-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 500 տուփ A4 ֆորմատի տպագրական թղթի ձեռքբերում՝ 937,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ինֆորմատիկ Սոլուշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00061961) 2015 թվականի հոկտեմբերի 22-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպիչի համար 5 հատ ժապավենի ձեռքբերում՝ 414,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

Ձ. 14/7.2

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1  
Հեռ. (+374 60) 700 255

11.11.15թ. № 03/30-2/34440-15

Ձեր № \_\_\_\_\_

«Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 06.11.2015թ. N 15/15.6/18980-15 գրության՝ կապված «Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոն Զանցուղազյան/

Կատարող՝ Ն. Կարապետյան  
հեռ. 011-910-437

11.11.15թ.  
№ 034/35448-15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Աղամյան 1  
Հեռ. 011 800077

10.11.15թ. Ձ. 14/7.2  
№ 06/3-3/34389-15

«Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 06.11.2015թ. թիվ 15/15.6/18980-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ԳՄՀԱՐ րաժին, Ա. Բարսեղյան  
հեռ. 011 800329

10.11.15թ.  
№ 034/35152-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

նոյեմբերի 2015 թվականի N Մ-  
քաղ. երևան

-Ա

14/7.3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ  
19-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ  
Մ Ա Ս Ի Ն

«Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ  
«Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-  
թյան 2015 թվականի նոյեմբերի -ի N 07/80-2/-15 և նոյեմբերի -ի N 06/-15 եզրակացությունները, ո  
ր ո ղ ռ մ է:

1. Սահմանել, որ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի կողմից  
(ՀՎՀՀ՝ 01266593) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմի-  
ջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական  
ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի «Յանգ լայֆ» ոչ  
առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից «Քրոսրոադս» միջազ-  
գային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ իրականացվող «Փյունիկ» ամառային  
ճամբար» ծրագրի մասին» N Մ-648-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի մարտի 14-ի  
N Մ-172-Ա, 2015 թվականի մարտի 13-ի N Մ-203-Ա, հուլիսի 24-ի N Մ-803-Ա և օգոստոսի  
28-ի N Մ-913-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետև և դրա համար  
ունի զգալի նշանակություն՝

«Հիդրոիզալիացիա - Տ.Վ.» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03011107) 2015 թվականի հոկտեմ-  
բերի 23-ին կնքված՝ N 15-05 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է  
շինարարական աշխատանքների իրականացում՝ 61,173,880 դրամի չափով, առանց ավե-  
լացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-  
րություն:



14/7.3

0010. Երևան, Մելիք-Աղամյան փող. 1  
Հեռ. (+374 60) 700 255

12.11.15թ. N 07/80-2/34880-1

Ձեր N

ՀՀ կառավարության բարեգործական  
ծրագրերի համակարգման հանձնաժողովի  
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի լրումն ՀՀ ֆինանսների նախարարության 05.11.2015թ. N 07/80-2/33928-15 գրության  
և հաշվի առնելով «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի 10.11.2015թ.  
գրությամբ ներկայացված պարզաբանումը, հայտնում ենք, որ ՀՀ կառավարության  
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 30.10.2015թ. N 15/15.6/18581-  
15 գրությամբ ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության  
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի  
N Մ-648-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Յանգ լայֆ» ոչ  
առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ «Քրոսրոադս» միջազգային  
բարեգործական հիմնադրամի հետ համատեղ)» նախագծի վերաբերյալ ՀՀ ֆինանսների  
նախարարությունը իր կարծիքը կհայտնի վերոհիշյալ բարեգործական հիմնադրամի  
կողմից ծրագրի խմբագրված տարբերակը ստանալուց հետո:

Այնուամենայնիվ նշենք նաև, որ եթե նույնիսկ ներկայումս հնարավոր չէ կանխատեսել  
և տարանջատել ապրանքների ձեռքբերումը ներմուծից, ապա անհրաժեշտ է մատուցվող  
ծառայությունների և իրականացվող աշխատանքների գումարները տարանջատել  
ապրանքների ձեռքբերումից:

Հարգանքով

Ատոմ Զանջուղազյան/

12.11.15թ.  
N 034/35559-15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

Ձ. 14/7.3

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1  
Հեռ. (+374 60) 700 255

06.11.15թ. № 07/80-2/33928-15

Ձեր № \_\_\_\_\_

«Հ կառավարության բարեգործական  
ծրագրերի համակարգման հանձնաժողովի  
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 30.10.2015թ. N 15/15.6/18581-15 գրության՝ կապված «Հ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-648-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ ներկայացված գործարքի վերաբերյալ առարկություններ չունենք, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված ծրագրի 10-րդ կետում արտացոլված գործարքները ներկայացված են ընդհանրացված տեսքով և մատուցվող ծառայություններն, իրականացվող աշխատանքներն, ապրանքների ձեռք բերումն ու ներկմուծումը տարանջատված չեն միմյանցից, ապա կարծում ենք, որ անհրաժեշտ է ծրագրում կատարել համապատասխան փոփոխություններ՝ տարանջատելով վերը նշված միջեցառումներն ու համապատասխան բյուջեները միմյանցից: Ծախսերի հաշվառման անհրաժեշտությունից ելնելով առաջարկում ենք փոփոխվելիք ծրագրում ամրագրել նաև մինչ օրս կատարված ընդհանուր ծախսերը՝

06.11.15թ.  
№ 034/34868-15

ըստ վերոնշյալ ծախսատեսակների և համապատասխան արժեքների, որի վերաբերյալ դեռևս առաջարկվել էր մեր 29.06.2015թ. N 07/80-2/16840-1 գրությամբ:

Հարգանքով

Ձ. 14/7.3

Արամ Զանգուղազյան

Կատարող՝ Ն.Կարապետյան  
հեռ. 011 910-437



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1  
Հեռ. (+374 11) 800077

05.11.15թ. 21.14/7.3  
№ 06/3-3/33664-15

«Հառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 30.10.2015թ. N15/15.6/18581-15 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի NՄ-648-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ՝ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.Սիրումյան

ԳՄՀՄ բաժին, Ե.Բեմալյան  
011-800-329

05.11.15թ.  
№ 034/34738-15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հուլիսի 2015 թվականի N Մ - 803-Ա  
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ  
19-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ-  
ՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(«Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հունիսի 29-ի N 07/80-2/16840-15 և հունիսի 26-ի N 06/3-3/16745-15 եզրակացությունները, որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Փյունիկ» ամառային ճամբար» ծրագրի մասին» N Մ-648-Ա որոշման մեջ (2014 թվականի մարտի 14-ի N Մ-172-Ա և 2015 թվականի մարտի 13-ի N Մ-203-Ա որոշումների խմբագրությամբ) կատարել հետևյալ տրացումները և փոփոխությունները՝


- 1) որոշման վերնագիրը և 1-ին կետը «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից՝ բառերից հետո տրացնել «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ» բառերով.
- 1) որոշման 1-ին կետում «2,030,460,400 դրամ» բառերը փոխարինել «1,987,880,000 դրամ» բառերով.
- 2) որոշմանը կից ներկայացված ծրագրի նոր խմբագրությամբ (կցվում է):
2. Սույն որոշման հավելվածում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱՐԱՐ



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Յանգ լաֆ» ոչ առևտրային կազմակերպություն  
հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Ա. Ահապովիչի գլխավոր



«19» հունիսի 2015թ.


«Փյունիկ» անառային ճամբար» ծրագիր

|    |  |  |
|----|--|--|
| 1. | Ծրագրի նպատակը                               | Հայաստանի Հանրապետության համայնքում երիտասարդական ճամբարի կազմակերպում:  |
| 2. | Ծրագրի բարեգործական որակն ապահովելու ներքին: | Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգված համակամոտովի 2013 թվականի թվականի հունիսի 19-ի «Յանգ լաֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Փյունիկ» անառային ճամբար» ծրագրի մասին» N U-648-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի մարտի 14-ի N U-172-Ա և 2015 թվականի մարտի 13-ի N U-203-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի նսնատեր իրականացում: |
| 3. | Բարեգործի                                    | Անկկախ է բարեգործի իրավունքում և նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ Կարվորի, տուրքերի, պարտավոր վճարների գծով արտոնություններին:  |
| 4. | Ծրագրի կատարողը                              | «Յանգ լաֆ» ոչ առևտրային կազմակերպության (ԱՍՆ, 80903 Կոլորադո, Կոլորադո Մպիլինգ, Լ. Կասկադ պողոտա 420):   |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը         | «Յանգ լաֆ» ոչ առևտրային կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղ (քաղ. Երևան, Մալաթիա-Մերասիխ 16 փողոց 104/11, ՀՎՀՀ՝ 01266593)՝ «Քրոստադոս» միջազգային բարեգործական հիմնադրամի ներս (քաղ. Երևան, Մալաթիա-Մերասիխ 16 փողոց 104/11, ՀՎՀՀ՝ 01266593) հաստատել:  |
| 6. | Ծրագրի բյուջեն                               | ՀՀ Կրտսյանի մարզ, Փյունիկի համայնք:<br>1,987,880,000 դրամ՝ առանց ԱԱՀ-ի:  |

21.9/13.4

|     |   |  |
|-----|---|--|
| 7.  | Բարեգործություն ստացողը   | ՀՀ և ՂՂ կարիքավոր ընտանիքների երեխաներ, խնամքի հատուկ կարիքներ ունեցող երեխաների խնամքով զբաղվող պետական հաստատությունների և հասարակական կազմակերպությունների շահառուներ, որոնց համար ճամբարի ծառայությունները անվճար են լինելու:  |
| 8.  | Ծրագրի իրականացման տևողությունը   | 2013 թվականի հունիսի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը:  |
| 9.  | Միջոցառումների նկարագրությունները և ժամկետները, անհրաժեշտ է կատարվող միջոցների ծավալը | <ul style="list-style-type: none"> <li>- ճամբարի համար տարածքի ձեռքբերում, տարածքի մաքրում, շինարարական գործիքների, տեխնիկայի ձեռքբերում և ներմուծում, կամուրջի կառուցում, ցուղառտնոսակայան և այլ տեխնիկայի ձեռքբերում (ներմուծում)՝ հունիս-2013 թվական - հուլիս 2016 թվական - 359,420,000 դրամ,</li> <li>- նախագծման աշխատանքներ, կոմունիկացիոն նոր հանգույցների համակարգերի կառուցում, շինակյութի, շինարարական գործիքների, տեխնիկայի ձեռքբերում և ներմուծում, որոգման հասնակարգեր, նկարահանում, արհեստագործական մասնաշենքերի, խողանցի և ճաշարանի վերակառուցում և կանխավերում, արհեստանոցի շենքի կառուցում և կանխավերում՝ հունիս 2015 թվական-հուլիս 2017 թվական - 1,567,980,000 դրամ,</li> <li>- ճամբարների կազմակերպում՝ 2880 երեխա յուրաքանչյուրը տարեկան 7 օր - 2015 - 2019 թթ. - 60,480,000 դրամ</li> </ul>   |
| 10. | Չեղք բերվող ապրանքների ու ծախսերի նկարագրությունները, ծավալները և նախատեսվող գինը     | <p>ՀՀ Կրտսյանի մարզի Փյունիկ համայնքում գրչություն ունեցող կիսավեր ճամբարի ձեռքբերում 2015 թվականի հունիս-հուլիս - 139,400,000 դրամ,</p> <p>ճամբարի կառուցապատման և նիւնաներազման աշխատանքներ</p> <ul style="list-style-type: none"> <li>- վեասված կառուցների բանդում, տարածքի մաքրում, շինարարական գործիքների, տեխնիկայի ձեռքբերում և ներմուծում՝ հուլիս 2013 թվական- հուլիս 2016 թվական - 95,450,000 դրամ,</li> <li>- նախնիներում գրչություն ունեցող տվերված կամուրջի վերակառուցում՝ հուլիս - նոյեմբեր 2013 թվական - 92,820,400 դրամ</li> <li>- նախնիներում աշխատանքներ՝ հունիս 2015 թվական-սեպտեմբեր 2016 թվական - 12,700,000 դրամ,</li> <li>- ջրագրի կառուցում՝ հունիս 2015 թվական-հուլիս 2016 թվական - 54,000,000 դրամ,</li> <li>- էլեկտրականության արտաքին ցանցի վերակառուցում, գեներատորի ներմուծում՝ հունիս 2015 թվական-հուլիս 2016 թվական - 63,200,000 դրամ,</li> <li>- ցածաձիկացում՝ հունիս 2015 թվական-հուլիս 2016 թվական - 16,080,000 դրամ,</li> <li>- կոյուղայանների կառուցում՝ հունիս 2015 թվական-հուլիս 2016 թվական 8,000,000 դրամ,</li> <li>- հեռախոս, ինտերնետ՝ հունիս 2015 թվական-հուլիս 2016 թվական - 18,100,000 դրամ,</li> <li>- ճամբարների վերանորոգում՝ հունիս 2015 թվական-հուլիս 2016 թվական 18,200,000 դրամ,</li> <li>- արագ ոռոգման ծամակարգերի կառուցում, անհրաժեշտ կյութերի և պարագանների ձեռքբերում (ներմուծում)՝ հունիս 2015 թվական-հուլիս 2016 թվական 7,800,000 դրամ,</li> </ul> |

|   |  |
|---|--|
| <p>- նկատարանի մասնաշենքերի վերակառուցում, շինանյութի և կահավորման պարագաների ձեռքբերում (ներմուծում) հունիս 2015 թվական-հուլիս 2016 թվական 400,300,000 դրամ,<br/>         - աղիքիխոտորանի մասնաշենքի վերակառուցում, շինանյութի և կահավորման պարագաների ձեռքբերում (ներմուծում) հունիս 2015 թվական-հունվար 2016 թվական 61,700,000 դրամ,<br/>         - խոհանոցի և ճաշարանի վերանորոգում, շինանյութերի, կահավորման օբյեկտի և պարագաների ձեռքբերում և ներմուծում հունիս 2015 թվական- հուլիս 2017 թվական - 843,800,000 դրամ,<br/>         - արհեստանոցի շենքի կառուցում, կահավորման սարքավորումների և պարագաների ձեռքբերում (ներմուծում) հունիս 2015 թվական-հունվար 2016 թվական - 64,100,000 դրամ,<br/>         - ձյուն մաքրող խոռոչների, հող վշակող սեխերկալի, տրակտորի և տրանսպորտային միջոցների ձեռքբերում և ներմուծում հունիս 2013 թվական- հուլիս 2017 թվական - 31,750,000 դրամ,</p> | <p>Ճարգի իրականացման ձևը կապված կազմակերպ. ծախսերը</p>   |
| <p>Ճարգի արդյունավետության նվազագույնը և միջոցառումների կազմակերպման աշխատանքներում:</p>  | <p>Համագործակցությունը պետական կառավարման, տնտեսական և հիմնականում մարմինների այլ կազմակերպությունները</p> |
| <p>Տարեկան մինչև 150 կամավարականների ներգրավում ճամբարների կազմակերպման աշխատանքներում:</p>   | <p>Տրագի արդյունավետության նվազագույնը և միջոցառումների կազմակերպման աշխատանքներում:</p>                   |



20 9/13



# <<ՔՐՈՍՐՈԱԴՄ>> միջազգային բարեգործական հիմնադրամ

№ 14/7.3

10 նոյեմբերի 2015 թ.

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ-գլխավոր գանձապետ

պրն ԱՏՈՍ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆԻՆ

պատճենը ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի

համակարգման հանձնաժողովի նախագահ

պրն ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ջանջուղայան.

Ի պատասխան Ձեր ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ուղղված 2015 թվականի նոյեմբերի 6-ի N 07/80-2/33928-15 նամակի հայտնում ենք, որ ղժվար է նախօրոք կանխատեսել, թե շինարարական գործիքների և շինանյութերի որ մասը կներմուծվի ԱՄՆ-ից, որ մասը ձեռք կբերվի Հայաստանում:

Մեր մտեցումը հստակ է, եթե ապրանքները պետք է գնվեն, ապա նախապատվությունը տրվելու է տեղում ձեռք բերելուն: Ուրիշ բան, եթե դրանք ստանալու ենք նախապատվության կարգով: Քնական է, որ այս դեպքում չենք հրաժարվի նվերից:

Քոլոր դեպքերում, դեկտեմբեր ամսին սպասվում է բարերարների հավաք, որից հետո հանձնաժողով կներկայացնենք ծրագրի խմբագրված տարբերակը, որտեղ ամենայն մանրամասնորեն հաշվի կառնվեն Ձեր բոլոր դիտողությունները:

Ընդունեք մեր երախտագիտությունը՝ արդյունավետ համագործակցության համար:

Հարգանքներով՝

«Քրոսորդադս» միջազգային բարեգործական հիմնադրամի

անօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Ա. Սաստրյան

3071

009-35280  
10-11-15

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-648-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Ցանց լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ «Քրոսլորադ» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ)» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը  | Հիմնավորում   |
|---|---|
| <p><b>Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության դիտողության և առաջարկության վերաբերյալ</b></p> <p>ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-648-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Ցանց լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ «Քրոսլորադ» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ)» որոշման նախագծի վերաբերյալ առարկություններ չունենք, որ ներկայացված գործարքի վերաբերյալ առարկություններ չունենք, որ ասկայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված ծրագրի 10-րդ կետում արտացոլված գործարքները ներկայացված են ընդհանրացված տեսքով և մատուցվող ծառայություններն, իրականացվող աշխատանքներն, ասպրանքների ձեռք բերումն ու</p> | <p>Կազմակերպությունը 2015 թվականի նոյեմբերի 10-ի գրությամբ ներկայացրել է պարզաբանում:</p> <p style="text-align: right;">20.14/7.3</p> |
| <p>ներմուծումը տարանջատված չեն միմյանցից, ապա կարծում ենք, որ անհրաժեշտ է ծրագրում կատարել համապատասխան փոփոխություններ՝ տարանջատելով վերը նշված միջոցառումներն ու համապատասխան բյուջեները միմյանցից: Ծախսերի հաշվառման անհրաժեշտությունից ելնելով առաջարկում ենք փոփոխելիք ծրագրում ամրագրել նաև մինչ օրս կատարված ընդհանուր ծախսերը՝ ըստ վերոնշյալ ծախսատեսակների և համապատասխան արժեքների, որի վերաբերյալ դեռևս առաջարկվել էր մեր 29.06.2015թ. N 07/80-2/16840-1 գրությամբ:</p>  |   |

20.14/7.3



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՆԱԽԱԳԻԾ

Ո Ր Շ ՈՒ Մ  
Նոյեմբերի 2015 թվականի N Մ- - Ա  
քաղ. Երևան

Ձ. 14/7.4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-1173-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՐԱՎԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի -ի N 07/80-2/-15 և նոյեմբերի -ի N 06/3-3/-15 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

